

ԲԱԺՆԵՐԻՆ
Ի Պոլսէ
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՅՄԱՆՔ
Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Դ ՏԱՐԻ

ՍԵՊՏ 9 ՇԱԲԱԹ 1900

ԹԻԻ 178

ՄԵՐ ԿՂԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Եկ, պատուենք եղբայրք, այդ սուրբ բաճանախ,
Սիրենք միշտ նրան մանկական սիրով.
Որ ամբողջ գիշեր իւր որդւոց վրայ
Պատրաստ է հսկել անբուն աչքերով:»

ԳՆԱՄԱՌՈՒԹԻՒՆ

Քսան երեսուն երկար տարիներէ ի վեր հայ կղերի մեծամասնութեան վարքն ու բարքը անընդառն իւր զարգած է հայ լրագրութեան հայ մամուլը կրնամ ըսել զբաւրած չէ այնքան ուրիշ խնդիրներով որքան այս խնդրով և որը որչափ հին այնքան նոր է մեզ համար. և որուն հակառակ այդչափի կարեւորութեան տուած չենք մինչև այսօր զժրագրաբար իւր օրինաւոր եւ վերջնական լուծումը: Տակաւին անցեալներս թէ թրքահայ և թէ Պուրկարահայ մամուլը արձազանք տուած էր կարգ մը տխուր և անախորժ գէպքերու որոնք մեր «աէր-պապադներու կողմէ գործուած էին: Տեղ մը ծեծկուռքի խնդիր, տեղ մը կրկնամուսնութեան, տեղ մը գինեմոլութեան, տեղ մը արծաթասիրութեան, ասոնք եղած են գրեթէ գլուխ-գործոցը մեր կղերներու շատելուն գործունէութեան: Հայ կղերը լոկ հոգևորական սքեմ և հոգևոր կոչում կրելով բաւական կը կարծէ զինքը իր պաշտօնին տէր ու իր եկեղեցիին փառքն ու շուքը գառնալու: Զափազանցութիւն ըրած չեմ ըլլար եթէ ըսեմ թէ մեր եկեղեցիները մեծաւ մասամբ ծոյլ կղերներու անկեղանոց ու բաղդախնդիր կրօնաւորներու ասպատանարան դարձած են, մարդ ըլլալէ առաջ քահանայ եղողներէ:

Աւելորդ ձանձրոյթ մը չենք ըրած ըլլար միթէ թուելով հոս մի առ մի անոնց այս ապի-

կարութեան ու ապիտութեան սոս'ալի հետեւանքները:

Բայց երբ մենք մեր կղերականներու ապիտութեան ու ապիկարութեան վրայ կը խօսինք ու կը հարուածենք զանոնք, չը մոռնանք յիշել մեր անտարբերութիւնը ու երբեմն ալ նոյն իսկ մեր ձեռքով այդ տեսակ անարժաններու աճումը դիւրացնող մեր ձեռնարկները: Երբեմն պատահական տիրացու մը ու քանի մը տարիներ կեցելէն ծառայող անընդունակ սարկաւազ մը քահանայական բարձր ու նուիրական պաշտօնին «քանսիրտադներ կը ներկայացնենք, նոյն իսկ մեր ձեռքով ստորագրութիւններ հաւաքելով կը դիմենք հոգևոր իշխանութեան ու մեր առաջարկած տիրացուն ձեռնադրութիւնը կը պահանջենք, բայց հազիւ քանի մը տարի կանցնի, կռիւ բողոք, ու «ի խաչ հան զդա ի խաչ հան»ի ազգակ մը կը ձգենք, տեսնելով մեր ջանքով, մեր ստորագրութեամբ ձեռնադրուած քահանային ապիկարութիւնը ու անվայել արարքներու պըտուելները:

Ուրեմն զարմանալի չէ որ երբ մենք անփոյթ ու անտարբեր գտնուինք մեր այգիին պահպանման ու նոյն իսկ մեր ձեռքով կոտորենք անոր ցանկապատը, կը ցաւինք ինչպէս կըսէ ժողովրդական առածը, երբ տեսնենք հոն գայլն ալ, ալուէսն ալ ու այգիին թշնամին ալ:

Իրաւ մենք ունեցեր ենք եւ ունինք մեր կղերականներու մէջ ազգին փառք ու պարծանք կարգ մը կղերականներ, բայց անոնք ինքնաբոյս հանճարներ են եղած, պէտք չէ անոնց վըրայ կաղապարելու աշխատիլ ամբողջ մեր հոգևորականութիւնը ու պահանջել անոնցմէ անոնց բարձր ազգասիրութիւնը, վեհութիւնը, երկաթէ կամբը յանդուգն ոգին, ինչ որ անկարելիին ցանկալ ըսել է, այլ մեր ջանքը ըլլալ առաջը առ-

ներով անպատրաստ ու տգետ կրօնաւորներու անման, աշխատիլ ունենալ և պատրաստելու միջոցներուն վրայ խորհիլ իրենց սրբազան կոչման արժանավայել հոգեորականներ:

Այնիւ ընթերցողը թող ներքէ ինծի որ անցողակի գիւղական խեղճ քահանայի մը պատմութիւնը ընեմ հոս.

Գարըլէլ Եպիսկոպոս Այվաղեան ի թիֆլիզ առաջնորդութեան ժամանակ գիւղական քահանայ մը կը ներկայանայ իրեն.

—Սրբազան հայր, խնդիրք մը ունիմ, կըսէ:

—Ըսէ տեսնեմ ի՞նչ է խնդրածդ.

—Մի հին սաղաւարտ գիւղիս եկեղեցին համար.

—Հապա ձեր եկեղեցին սաղաւարտ չունի.

—Ոչ.

—Ու չէ՞ ալ ունեցեր մինչև հիմա.

—Ոչ.

—Քանի տարուան քահանայ ես.

—Քսան և հինգ տարուան.

—Ուրեմն դուն պատարագ ըրած չե՞ս քու եկեղեցին.

—Միշտ, ամեն շաբաթ—կիրակի օրերը.

—Ուրեմն ի՞նչպէս կարելի է առանց սաղաւարտ գնելու գլուխդ բեմը բարձրանալը.

—Բայց, պատարագ ըրեր եմ, հայր Սուրբ.

—Ինչպէ՞ս, այս անգամ բարկացած կը հարցընէ Այվաղեան Եպիսկոպոսը.

—Հայր Սուրբ, որովհետեւ չէի գիտեր թէ որո՞ւ գիմէի, դժուար մը... փորած... էի և... այն... կը գնէի գլուխս... սաղաւարտի տեղ:

Գարըլէլ Եպիսկոպոսի բարկութիւնը ձիծաղի կը փոխուի.

Ահա մեր կարգ մը հոգեորականներու ապիկաութեան ու տգիտութեան մէկ նմոյշը, որոց յանձնուած է աւետարանական բանին վարդապետութիւնը: Այս մասին մեր կարծիքը պիտի յայտնենք ուրիշ յօդուածով մը ցոյց տալով այն միջոցները որոնք եթէ ոչ բոլորովին՝ գէթ մասամբ կարող լինին բարւոքել մեր հոգեորականներու անկեալ վիճակը:

Ֆիլիպէ

ԱՐԱՄ ՍԱՀԱԿԵԱՆ

ԶՈՒԼԱՐԱՆ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱԹԵՐՈՒ

ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ձուլէ ամեն լեզուէ տպագրական տառեր, մասնաւորաբար Հայերէն և Թուրքերէն, Էսպան, Գաղթաթ, Էնթերլիններ, Գիծ և Կարնիւթիւր:

Գինքը յոյժ գիւրտաւոր է: Հասցէ

AGOP DZĖROUNIAN SOPHIA (BULGARIE)

ԱԶԳԱՅԻՆ

Կրօն. Ժողովը իր վերջին նստին մէջ չեղեալ համարեց Վառնայի մէջ կատարուած կրկնամուսնութիւնը յանձին Կարնեցի Բիւզանդ Զաքարեանի, որ Կարնոյ մէջ ամուսնացած և յետոյ Վառնա երթալով երկու վկաներով ինքզինքը ամուրի ձեւացուցած ու կրկին ամուսնացած էր: Ժողովը տեղեկութիւն ուղեց Պուլկարիոյ Այցեղու հովիւէն թէ ո՞վ կատարած է այդ պսակը և որո՞ն հրամանաւ, որպէս զի հարկ եղած կանոնական պատիժը անօրինուի պատկազիր քահանային:

—Մալաթիոյ մէջ հաստատուել է Միսիոնարական երկսեռ որբանոց մը, որուն մէջ կը դաստիարակուին 60 մանչ և 60 աղջիկ օրբեր: Երկու հայ և երկու հայ բողոքական, ընդամենը չորս անդամէ բաղկացեալ հոգաբարձութիւն մը կը խնամէ Որբանոցը:

Քաճիէն մեզ կը գրեն

«Անցեալ օր երկու գոտեալ խնամի տիկիններ եկեղեցոյ գաւթին մէջ սոսկալի կերպով կռիւի մը բռնուեցան, այն միջոցին ժամաւար տէր պապան իր խուցին պատուհանին առջեւ կեցած՝ մատուցներովը մօրուքը կը սանտրէր: Երբ կռուողներէն այն՝ որ անմեղ էր, տէրպապան միջնորդութիւնը խնդրեց, այս վերջինը մտածելով որ անիրաւ կողմը իր շնորհքով վճարող մէկ ծուխն է, խաթր մնայ բան մը ըրած չըլլալու համար, պատուհանը գոցեց ու անխօսուկ ներս քաշուեցաւ: Բանակուիւր կէս ժամ շարունակուեցաւ ու եթէ լուսարարը վրայ չը հասներով կռուողները գաւթէն դուրս չի հաներ, թերևս մինչև իրիկուն շարունակէին խնամիական այդ անվերջնալի կռիւը, առանց տէր պապան յանդիմանուելու երկիւղն ունենալու:

Տեղը չէ՞ պահանջել թէ Ժողովուրդը այսօրինակ պարտաճանաչ քահանաները լի ուլի վարձատրելու և քաջալերելու է (?): Այնպէս չէ՞ տէր պապա:

Ահանատեա

ԻՆՆԵՐՈՐԴ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆ

Ստացանք Ժընէվի մէջ հրատարակող Սոսիալիստական օրկան Հանդէս ամսագիր մը, որ կը յայտարարէ թէ նոր կուսակցութեան մը հիմնողն ու կազմակերպողը պիտի ըլլայ: (Նայինք մեր էնտելիքէնտ պարոնները քանի՞ տեսակ կուսակցութիւններու պիտի բաժնեն աս խեղճ ազգը):

Բոժ. — Սոսիալիստութիւն... է՛հ, ոկաւ մակաւ... աս էր պակաս:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

«Շարժում»ի Ե. Ս. ին

Անցեալ շաբաթ «Գաղտնիքներ» վերնագրով գրած յօդուածնուդ մէջ ըսած էիք թէ «Հայաստանի հայու- թիւնը կորուսած էր զէն ի ձեռքին կոտորու, իր պատիւն ու սեփականութիւնը արիւթ թեմք թշնամիին զէմ պաշտպանելու յատկութիւնը. շատ զինեալ հայեր իրենց զէնքերը ձգած փախած են՝ փոխանակ զէմ զնկու թըշ- նամիին»:


Հայաստանի հայութեան զէմ ձեր բրած այս ամ- րաստանութիւնը ճշմարտութեան հակառակ է ընդհանուր առմամբ: Գէպքերը կը վկայեն թէ ո՛ւր որ Հայաստան- ցին զէնք ունէր, հոն ընդգրկուած ըրաւ. շատ քիչերն էին որ զէնքերն ձգած փախան, եւ ներքին ինձ ըսել թէ այս վերջիններուն կը պատկանէր դուք եւս, որով- հետեւ ձեր ծննդավայրը եղող խ. գիւղի եկեղեցիին մէջ ձեզ տրուած զէնքերը մերժելով խուճապով վառեա փախաք եւ ծանօթ ու պատուաւոր անձնաւորութեան մը տանը մէջ ի ներկայութեան կարեւոր անձանց, յե- զափոխութեան եւ յեղափոխականաց զէմ նախադիւրսեր տեղացիք: Իսկ այսօր ելեր արիւթ թիւն եւ հայրենասիրու- թիւն կը բարեգէք:

Այս այս հակասական ընթացքը զարմանք կը պատ- ճառէ ինձ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԸ

(Եթէ Պ նամակագիրը գիտցած ըլլար որ նոյն յօդ- ուածագիրը որոն կողքը որ նստի անոր թմբուկը զար- նող մըն է, անոր հակասական այս ընթացքին համար ա- մենեւին չը պիտի զարմանար):

ԺԱՄԱՆՑ



Կրակ կհրած՝ ոյ անւնդոյ ֆոստ աղոյն,
Տեսնեմ դուն ինչ կը ծաւնու.
Ծափօք շախիւն ասկ շրտում դոն ակոսայ
Կռնցքդնես, պոսաւայ:

Ես ֆեզ գիտեմ, վահան մըն ես դուն քիթեղես,
Որ թուֆ իսկ կը դողայ.
Ի՞նչ. կործմ պարզե՞ք ֆեզ համար չե՞ ֆաջի
այդ գործ,
Եթէ կ'ուզես, քե՛ք փորձ:

Ծակն է ֆուկին սպասանը, ուր վազն ի վազ՝
Կուոյ ասեմ կը մեմաս.
Դուն միշտ ֆու, միշտ քանսարկոմ հազի թե
հազ
Դիւնակի ասկ կը ճրաս:

Արժանի չե՛ս քննամոքեան. արգահասանֆ
Կ'առքէ ֆուկին ցաղիքոսանֆ.
Ղասապ մըն ես. գնա՛ գործըդ եւ մանուկին
Հացդի թաթիս՝ արիւնին:

Յայնի ճակաս, որոշ կոխ ֆու քանըդ չե՛
Այո՛ կամ ոյ, կամ հա չե՛.
Դուն ասկալին խաչագողի ցած արեղայ,
Դնա՛ գործըդ ա՛ տղայ:

ՏԻՒՆՃԷ

«ՀԱՅԵԼԻ»Ի ՕՐԱՑՈՅՑԸ

1900

Սեպ. 8. Ուրբաթ պահք: Պատմական.—1897 Ռուս- ճուքի Տ. Ղեռնդիանսը, որուն էրէցկինը մեռած էր, Ռուսմանիացի 15,000 Փր. տարեկան եկամուտի տէր աղ- ջկան մը հետ Բ. անդամ կարգուելու համար քաղաքի ժողով- մտաւ. բայց չի յաջողելով, Պոթուշանի մէջ մեթրես մը առած նստաւ:

Սեպ. 9. Շաբաթ Նիկիոյ ժողովոյն: Պատմական.—1895ին հրապարակագրի մը անգաղսնապահութեամբը իմաց- ուեցաւ որ լոնտոնեան կեդրոնական յեղափոխականը պա- լոնով կը մտնէր Պոլիս. ասոր վրայ Ժընէվականը ալ որոշե- ցին յառաջապահ զորագունդ մը կազմել. . . օգին մէջ:

Սեպ. 10. Կիր. Բարեկեն, ան խաչի: Պատմական.—1898ին ընդամենը 4 թերթ հրատարակող «Աշխարհ»ի ճէ- լէճիւլէ խմբագրութիւնը պոռոտաձայն յայտարարեց որ թերթը Ռուսճուք փոխադրած է եւ «Երիտասարդ Հա- յաստան» անունով պիտի հրատարակուի. . . չեկող ամ- սաղիսուն:

Սեպ. 11. Բշ. պահք: Պատմական.—1898 Սեպ. 11ին Պուրկազի մէջ խաչագողներու խմբակ մը «ի նպաստ անտէր որբ եւ որբուհիներու» ըսելով 20,000 Փր.ի տպագրեալ տոմսեր շրջաբերութեան հանած միջոցին օժիբը ձեռք տալով խայտառակուեցաւ:

Սեպ. 12. Գշ. պահք: Պատմական.—1897 սեպ. 12ին Վառնայի ընթերցասիրաց ընկերութիւնը Առաջին անգամ հոգին աւանդեց, ու թէ եւ այս տարուան սկիզբը հոգեգարձ եղաւ, բայց օգոտոսի վերջէ, շուրէն թախանն նետեց:

Սեպ. 13. Դշ. պահք: Պատմական.—Տարուսի խմբա- րութիւնը վերջը զրպարտող Շարժումի դէմ դատ բացած ըլլալը յայտարարեց:

Սեպ. 14. Եշ. պահք: Պատմական.—1897 սեպ. 14ին Տ. Աթանաս քահանան Ռուսճուքի մէջ խախտեց թիւն ընկել սկսաւ:

(Շար.) Ֆիլիպէ

ԱՌՕՆԹՐԱՏԱՄՈՍ

ՍԱԼՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԲԱՄԲԱՍՈՂՆԵՐԸ

ՊԱՏԿԵՐ Բ.

ԵՐԿՈՒ ԶԵՎԶԵԿՆԵՐ

(Մարտի կիրակի ցերեկ մը: Բերա, Իւնիօն Ֆրանսէզի սրահին մէջ տեղի պիտի ունենայ ԱՂԳ. Հեւանդանոցի նպաստին համար կազմակերպուած նուագահանդէսը: Չիւնի փոթորիկէ մը վերջ, օդը մեղմացած է և արեւը գարնան տպաւորութիւնը կուտայ այլադան և ճոխ բազմութեան մը որ հետզհետէ կուգայ գրաւել սրահը: Արդէն ներկաներուն ձայնը լեցուցած է օդը և էրիկ մարդիկ կը շարակրատեն կիներուն հետ, որոնք կը խնդան զուարթօրէն: Սալէմեան պատուհանին առջև ոտքի վրայ իր ձորաբը կը գցուէ, հետուէն նշան ընելով կնոջ մը որ կը ժպտի հոգմահարի շարժումներուն հետ: Նոյն միջոցին սրահէն ներս կը մտնէ Արմանեան և կը մօտենայ Սալէմեանին:

Սալէմեան.— 30 տարեկան, միջահասակ, սրածայր մարմնով, փայլուն կօշիկներ, սփռնիկ, երկու անգամ Եւրոպա ճամբորդած է մէյ մէկ ամիս և իր աշխարհիկ էրիկ մարդու ձևերով ու բոքէրի մէջ ունեցած ճարտարութեան շնորհիւ շատ գնահատուած՝ Հայ ընկերութիւններու մէջ:

Արմանեան.— 28ի մօտ, վաղեմաւ գէժ, խնամուած պիւններ, քիչ մը երկայն մազեր: Արտն թէ լա՛ ջոն թա՛ կահար մ'է... հեղինակ «O yon s'is m'ssue» վաւրին:

Արմանեան.— Պօնտուա, Լէ'օն, կարծեմ քուռ կընես կոր. հէ՛:

Սալէմեան.— (Բարեկամիկն ձեռքը քոթուելով) Ալօն տօնգ. պարզապէս նեղացող հանգիստաւսի մը գէժքն ունիմ. այսքան ալ պաղ սկզբնաւորութիւն չէի տեսած:

Ար.— (Քնթիծաղով մը) Հայու գոյժ. բարեկամ մըս. (շորջը նայելով) սակայն աղւոր բազմութիւն մը կայ, հէ՛. երբէք չէի կարծեր որ այսքան շիք կիներ կան մեր մէջ:

Սալ.— (Հեզմօրէն) Այո՛. մեր կիները սաշէի մէջ պահուած առարկաներու կը նմանին, առաջին անգամուն աղէկ կը հոտին, իսկ երկրորդին (ունգունքը կը գոցէ):

Ար.— Զը լսե՛ն. (Շարժում մը րկելով կեցած տեղը) բայց օգն ալ աղւոր է այսօր. շիտակը եթէ առջի օրուան պէս ըլլար, տեղէն չպիտի երերայի:

Սալ.— Ինծի պէս, արդէն եթէ օդը գէշ ըլլար. հաւնած կիներէդ ոչ ոք պիտի գար հոս... Մեծ մասը գիւղերէն է. (բարեկամիկն մօտենալով) մա նաւանդ Գասրգիւղցիներ կան որ, ըսկիսանթ, մօնչէր. (կը խնդայ)

Ար.— Փարսէօն, վա՛:

(Նոյն միջոցին Արմանեանի աչքերը ծանօթ կնոջ մը կը հանդիպին և խոնարհելով կը բարեւէ:)

Սալ.— (Վնդռնակաբար) Տեսնե՛ք ի՛նչպէս պիտի զարնէ. Որքան որ լսեցի, վերթիւօղ մը ըլլալու չափ չէ. Թող ո՛ր զարնելիքն ալ մեծ բան մը չէ արդէն:

Ար.— Ատ էր պակաս դոյ եղած կտորներ ա՛մենքն ալ. ի՛նչ կը յուսաս մեր աղջիկներէն. Արթիսթի հոգի չունին խեղճերը:

Սալ.— Ուրիշ պատճառ մ'ալ կայ որ մեր աղջիկները շատ զլայուն կըլլան, շուտ կը մարին. (կը խնդայ)

Ար.— Այո՛. Ալա Սվաճեան. աչքերնէն վեր: Աստուածածնի պէս:

Սալ.— Անգուլթ մի՛ ըլլար եթէ գիտնար թէ իր վրայ այսքան գէշ կը խօսի. տես ի՛նչպէս կը գիտէ կոր քեզի:

Ար.— Ոչ այնքան անուշ որքան ուրիշ մը կը գիտէր քեզ վարկեան մը առաջ:

Սալ.— Զը ճանչնայի. Տիկին Փետուրեանն է, հոգմահար ի շարժումներովն երէկ գիշերուան կորսնցուցած սակիներս համբեց:

Ար.— Ի՛նչ նորէն սխալ խաղալ. չե՛ս գիտեր որ մեր կիները էրիկ մարդերէն աւելի վարպետ են հիմա:

Սալ.— Այո՛. Ֆէ'մէնիլմն է որ կսկսի բօքէրով:

Ար.— (խնդրալով) Պապօ՛. Արմաշի վարդապետ ներուն պէս պզտիկ իմաստասէր մը դարձեր ես:

Սալ.— (Ակրաններուն մեջէն) Հը՛. սըւտնք. անէմիքները:

(Երկու բարեկամները կը լսեն պահ մը իրենց խնդրաբը շարունակելու համար: Նուագահանդէսը չէ սկսած տակաւին և շատեր ոտքի վրայ կը խօսակցին: Նոյն միջոցին, կատարելապէս չիք և գեղատի կին մը, յիսունոց էրիկ մարդու մը հետ, սրահէն ներս կը մտնէ ժպտուն և Սալէմեանը տեսնելով կը բարեւէ եւ կանցնի):

Արմանեան.— (մեղմ ձայնով) Կը ճանչնաս՝ որքան գեղօցիկ է:

Սալէմեան.— ...! (Վնդռնակաբար կը նայի)

Ար.— Զըսե՛ս. ո՞վ է:

Սալ.— (Մեղմ ձայնով) Զը ճանչցա՛ր. Տոքթոր Աւետիսին աղջիկն է. քովինն ալ էրիկը. (ժպտելով) ի՛նչ թիւք, հէ՛:

Ար.— Թօքէ մը որ կը յուսաս որ ագ կինը սիրէ էրիկը:

Սալ.— Խեղճ մի՛ ըլլար. էրկանը երեսը անգամ նայած չունի. սիրելու մարդ պակաս իրեն. տարի մը ամբողջ Փետուրեան Տիրանին հետ էր. նա մականերին էրիկը կը տանէր կը բերէր:

Ար.— (Հեզմօրէն կեսափրփրաւ) Ի՛նչ կըսէ:

Սալ.— Զարմանալու բան չը կայ, կերեայ որ օգուրան չես. ամբողջ Բերա իմացաւ. կը կարծես

սր էրիկը կարենայ հակառակիլ. ամէն գիշեր ծեծ կուտէ կնոջմէն.

Ար.—Բա՛, էք զամբլ՝.

Սալ.—Առանց չափազանցութեան. գեղեցիկ կիներէն վախցիր. սիրոյ մէջ կատաղի կըլլան. եթէ տարի մ'ալ Տիրանին հետ մնար, կը փախչէր թերեւ մէկտեղ:

Ար.—Ըսել է Տիրանը հոս չէ.

Սալ.—Ձէ՛ տեսած ընդհ. իմ լսածս Վրեննա գացեր է սքանաւալ մը չըլլալու համար. պօշմարդուն մէկի ալ ան է. տալի մը ամբողջ ափիչէ ըլլալէն վերջ խելքը գլուխը եկաւ.

(Լսութիւն մը, երկու բարեկամները պահ մը կը դիտեն կինը որ նոյն միջոցին ծանօթի մը հետ կը խօսակցի):

Արմանեան.—Շիտալը կը զարմանամ որ ինչպէս աս աղւոր կինը սիրեր է Տիրանը. գիտցածս Տիրանը սիրուն բան մը չէ՛.

Սալման.—Տէքալէ մը որ բայց սիրոյ մէջ զարմանալի է. կիներուն գաղտնիքն է ան. զօրաւոր զգացումներու մէջ ճաշակ չունին. ատոր համար է որ կիները յաճախ կը փոխեն իրենց սիրահարները.

Ար.—(Խնդալով) Ալոն տօնդ, ուրկէ սովորեցար այդ հոգեբանութիւնը. ըսել է այդ կինը չը սիրեր ալ Տիրանը.

Սալ.—Կերեակայեմ թէ չէ՛, (ճայնը ստելի վեղմացնելով) արդէն խօսուած կնկան մէկն է. ամենուն հետ է. հետը ժամանակ կրնայ անցնել մարդ. չտեսա՞ր ինչ ձեեր ունէր ներս մտած ատեն. (խնդալով) արդէն հիմա ալ ես քուզ կը կոր հետը:

Ար.— . . . ?

Սալ.—(պարծախով) Կեցիր. քանի որ չես հաւատար. երթամ քիչ մը խօսիմ հետը.

(Եւ աւտանելի զէվզէկը կտարտուելով կը յառաջանայ դէպի տիկինը):

ՏՈՒՐՆՈ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԽՐԱՏՏՈՒ ԿԻՆԸ

Կան կարգ մը խրատի կարօտ տան տիկիններ, որոնք իրենց ամուսնոյն գլխուն մշտնջենական խրատատուներ են. սակայն չը կարծուի թէ ասոնց խրատները լրենց ամուսնոյն շահուն համար է, ընդհակառակը, իրենց ամէն քմահաճոյք.

ներնուն անվրէպ կատարման համար խրատի անըսպառ աղբիւրներ են, որոնք գիշեր ցորեկ ձանձրացուցիչ քարոզիչէ մը աւելի գլուխ կը ցուցնեն անընդհատ:

Իրիկուն մը տան մը մէջ հետեւեալ խօսակցութիւնը կըլլար.

—Սիրուն աղա, աս իրիկուն ինչո՞ւ ուշ մընացիր:

—Քանի մը բարեկամներու հետ մէկ երկու օլի խմեցինք, ատենը անցաւ:

—Մեղայ Տէր Աստուած, մեղայ, սանքի տունը բարի չի կար:

—Էյ, ի՞նչ կըլլայ դուրսը մէկ երկու հատ խմելով:

—Մեղքը չէ՞ բարային, զայէր խօլայ կը վաստկիս կոր, չէնք շնորք տունդ եկոյ բախիդ խմէ. ան փարայով հիշ օր չէ նէ գլխուս նոր պոյաւա մը կառնէիր:

—Անանկ է եա, զօր կը վաստկիմ կոր տէյի քէյֆիս համար հիշ բան մը չընեմ տէ ձեզի խարճեմ հա՞. . . շիտակը ալ որ խրատ:

—Գէշ կըսեմ կոր, խելքը գլուխը մարդը ամէն բանէ առաջ իր տունը՝ իր ընտանիքին մտմտալու է:

—Ըսես չըսես կը մտմտանք կոր իշտէ կէնէ ամառ գլուխը եկաւ. 15 ֆրանք տունին քերան տալու է, տահա երկու ֆրանք չի կայ ճէպրո, խապար ես.

—Աղէկ որ ըսիր, աս ամիս քերային փարան ինծի տուր:

—Ինչո՞ւ, ի՞նչ պիտի ընես:

—Սուրբիկին բօրթրէն քաշել պիտի տամ, օտվըներուն ալ չիֆթ մը պօթին առնեմ.

—Տունին քերան չի տանք տէ Սուրբիկին բօրթրէն քաշել տանք հա՞. . . շիտակը աղէկ խրատ:

—Կիտես չիտես կը զրուցես, Սուրբիկը բէք աղէկ ուղղի մը կայ Ռուսճուխէն, տղան երկու օր առաջ մալ առնելու համար հոս եկեր տօմպիչին (տոպրիչ) հօթէլը ինչեր է, լախըրաւն եղեր է նէ՛ բօրթրէն մէյ մը տեսնամ ըսէր է.

—Ան քի աղէկ մարդ է կըսես կոր նէ բօրթրէն տեսնալուն թող տուն գայ տեսնայ:

—Էրիկ մարդ չէ՞ք մի, մութլախա մէկ թաբաֆիդ պօշ է, հիմայ անանկ վարպետ ֆօթօկրաֆիներ կան քի բնականէն տահա տեսկոտ կը հանեն կոր պատկերը:

—Էյ տանտէրը քերա ուղէ նէ ի՞նչ ըսենք:

—Սախըն հա՛, չըլլայ որ փարա մը տաս. վարի քաթօին դուռը բրթեր, պատն ալ փլեր է, անձրե գայ նէ՛ հա պիւրէ կը վաղէ, շինել տուր ըսելով ալ պերանս մաղ բուսաւ, տահա պիտի չինել տայ:

—Այլընդ խարճելնէս ետքը, չինել տայ ան քերան ուզէ նէ, մարդուն ի՞նչ ըսենք:

—Աման տուն ալ . . . հիշ պէճէրիկի չես, նայէ Աղաւնիյի երկը կնկանը ինտոր միւթիւ է, ինչ ըսէ նէ ան պիտի ըլլայ, կոխը կտրես նէ դուրսը չի նստիր տէ խախտէ մը պիլէ չը խմեր. ամա ան չէ՛, մարդ մը իւր ընտանիքին վրայ սրտանց սէր ունենալու է:

—Անանկ է, ընտանիքին վրայ սէր ունենալուն մարդը սօն սօնունա թօփ նետեց:

—Անոնք գործերին գիտեն, քիմ պիլիւր տակը ինչ դրաւ:

—Քէչէ միւտիւր մը պիլէ չը կրցաւ դնելու, ուրի՛ն տունը կը հարցունես կոր դուն, չարչին նստած խանութին քերան չէր կրնար տալ. Աղաւնին պիւթէպան քիւֆէսի պէս չարխանն ր, ֆիւտաններ չինել կուտար, տահա ո՞ր մէկն ըսեմ, կնկանը ամէն ուզածին բէք աղէկ ըսելով մարդը ան հալը ինկաւ:

—Հէլպէթտէքի պիտի ընէ, ամա գործը աղէկ չէ դացեր, անիկա Աստուծոյ գիտնալիք բանն է, ինչ ըլլայ ըլլայ, մարդ մը ամէն բանէ առաջ իր տունը պիտի մտմտայ. իշտէ ասիկայ քեզի խրատըս ըլլայ:

—Շնորհակալ եմ, ի՞նչ աղւոր խրատ, ամէն մարդ գործը թողու գիշեր ցորեկ ձեզ մտմտայ հա՛. . . չիտակը գէշ խելք չէ:

—Էյ միւնակդ քեզ պիտի մտմտաս, մենք հոգի չունինք զայն:

—Մտմտայ ի՞նչ է, մարդ ըսածդ կաշխատի, գէշ աղէկ ընտանիքը կապրեցունէ, իշտէ այսչափ:

—Աս ապրա՞նք է, հալիւր առապանելով պաղեւրը զէֆըր ճիւնպիւշը կըսէ, քա տահա մեղայոր ո՞ր մը օրանց թոփուած տէ չէն շնորհք սէյրի մը դացած եմ:

—Ե՞րբ պաղտիլ ուզեցիր տէ չը տարի:

—Իմ ըսածս ան չէ, սա դուրսը պօշ տեղը խրաֆ չընես նէ մենք կիւլիւ պէս կէ չինմիշ կըլլանք:

—Էյ բէք աղէկ սա տուրսի մասրաֆ ըրածս ո՞րն է նայինք, ան ցուցուր:

—Հիմայ նայէ, աս իրիկուն քիչէն քիչ տուրսը հինգ դուրուշ մը խարճեցիր եմ:

—Հայտէ խարճեցի ըսենք:

—Իշտէ ատ հինգ դուրուշը պօշունա չի խարճէիր տէ ինծի պէրէիր նէ, հինգ դուրուշի սախը կառնէի, Սուրբիկը քիչէն քիչ երեք ամիս կը ծամէր:

—Ան էր քուկին տալիք խրատդ քա, վայ իմ գլխուս, Սուրբիկը սախը պիտի ծամէ տէյի ես մարդու հետ չը տեսնուիմ, մարդու բարեւ չտամ հէ՛. . . ատանկ ըսելով սա շաբխաս քեզի տամ, դուն ալ ֆօթօզդ ինծի տուր լմնայ երթայ:

—Ատ թապիյէթին տէրն էիր նէ թող չը կարդուէիր:

—Ով գիտեր ասանկ ըլլալիքը. ես գիտէի որ

կարգուող մարդը իրեն սրտակից ընկեր մը կու նենայ. դուն ելեր ինծի կրտես որ դուրսը մարդու հետ մի տեսնուիր, թախի մի խմեր քի Սուրբիկէն սախը ծամել տամ, աս եղաւ. . .

—Գէշ կըսեմ կոր:

—Շատ գէշ . . . քու միտքդ զիս խրատել չէ, այլ ձեռով մը ինծի ստակ քաշել է. կատարեալ կին մը պէտք է որ ամէն ատեն իր էրկանը օգնէ, անանկ էրկանը իրիկուն մը բարեկամներուն հետ հինգ դուրուշ խարճելը նպակառութիւն համարելով խրատ տալու չէ՛, և բօրթէն քաշել տալու, պօթին առնելու համար փարա ուզելու չէ՛:

—Էլպէթտէ պիտի ուզեմ, պէտքի պան է նէ՛:

—Քու ուղածներդ պէտքի բաներ չըլլալէ ի զատ վնասակար ալ են. ես չեմ ուզեր որ աղջըկանս ֆօթօկրաֆը անոր ասոր ծառքը գտնուի. ուզող մարդ մը կերպով մը կընայ տեսնել անիկա. պախտասա քի՛ տղան հոս է եղեր կըսես կոր: Հիմայ ես ալ քեզի խրատ մը տամ, նայէ որ աղէկ միտքդ պահես, քանի որ մենք միտսին պըսակում ենք, ինչ որ պատահի երկուքնու համար, մէկ բան ըսել է, ձախտողութիւնն ալ մեզի համար է երջանկութիւնն ալ. հիմա կրնաս քու խրատներդ ուղածիդ չափ երջնանք կամ կարճըցներ, ֆախաթ գիտցած ըլլաս որ ականջ չպիտի կախեմ, մինչև որ համալուիս թէ՛ ամուսնութեան մէջ իրար խաբելէ առելի դէշ բան չկայ:

Ջ.ՈՒԹՒԼԿ

ՀԵՌԱԿՐԱԿԱՆ (ԱժԱՆԱ ԲՈԺՈՒԿԻ ԵՆ ԸՆԿ)

Քամալաթքա

Երէկ (Ուրբաթ) րարեպաշտ (?) օրիորդ մը եկեղեցի եկաւ՝ մինչև տաճարէն ներս հետը բերելով նաև իր օրական . . . շունը, որ բաւական գայթակղութիւն պատճառեց հաւատացեալ ժողովուրդին: Ժամկոչը անմիջապէս անոր պոչէն բռնած դուրս նետեց:

(Ժամկոչը պարտաւոր էր այդ օրիորդին ալ օծիքէն բռնած եկեղեցիէն դուրս նետելու:)

Անցեալ կիրակի եկեղեցիի պահարանին մէջ երեք զէվզէկուհիներ այն ատիճան յառաջ գացին իրենց կէս ֆրանսերէնով համեմուած զէվզէկաբանութեանցը մէջ, որ վերջապէս արդար յանդիմանութեան մը արժանացած պարտաւորեցան կծիկը դնել:

Հաճի Բանաթք

Համազարամ աղան՝ անցած կիրակի իրիկուն ընտանիքին հետ դէպի Հայոց գերեզմանատունը պառլամընիկ ուղերով, Հաճի Բանաթքի զրօտարանին տուչէն անցած ատեն աղջըկանը ֆիստանին զրպանէն մէղէլիս պօզում մը սուճուի ինկաւ, զոր անմիջապէս յափշտակից հանտեղուանքը սըլլատացող շուն մը, ի մեծ ցաւ Համազարամ աղայի, որուն նոյն իրիկուն ազգամահութիւնը հառամ եղաւ:

ОТГОВОРНИКЪ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.